ՍՍՌՄ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ—ՀԱՅԿԱԿԱՆ ՖԻԼԻԱԼ

«Տեղեկագիր» № 1 (6), 1941 թ. Երևան

Բ. ԱՌԱՔԵԼՅԱՆ

ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆ ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. ԹԵՈԴՈՐՈՍ ՌՇՏՈՒՆՈՒ ԵՎ ՄՈՒԱՎԻԱՅԻ ՄԻՋԵՎ ԿՆՔՎԱԾ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԺԱՄԱՆԱԿԸ

650-ական թվականների սկզբներին Ասորիքի արաբ կառավարիչ ու զորավար Մուավիան և հայոց իշխան Թեոդորոս Ռշտունին կնքեցին մի պայմանագիր, որով Հայաստանն ընդունում էր արաբական խալիֆաթի գերիշխանությունը։ Այս պայմանագրի ամսաթիվը հշգրտված չէ. ոմանք այն դնում են 651 թվին (Մ. Օրմանյան)[1], ոմանք 652 թվին (Կ. Եղյան)[2], մյուսները՝ 653 թվին (Հ. Մանանդյան)[3], Զամչյանը դնում է նույնիսկ 646 թվին[4]։

Պայմանագրի բովանդակության և կնքման ժամանակի վերաբերյալ տեղեկություններ է պահպանել ժամանակակից պատմիչ Սեբեոսը։ Ահա այդ վկայությունը.

«Արդ՝ իբրև ետես արքայն Իսմայելի դյաչողու�յաղթութեանն, և զի բարձաւ թագաւորութիւնն Պարսից, իբրև լցան ամք Գ պայմանի խաղաղութեանն՝ ոչ կամեցաւ այլ աւելի առնել խաղաղութիւն ընդ թագաւորն Յունաց, այլ հրաման ետ զաւրաց իւրոց ունել գործ պատերազմի ընդ ծով և ընդ ցամաք, զի բարձցէ և զայն ևս թագաւորութիւն յերկրէ, յերկոտասաներորդ ամի թագաւորութեանն Կոստանդի[5]։

Եւ ի նմին ամի ապստամբեցին Հայք և ի բաց կացին ի թագաւորութենէն Յունաց և հնազանդեցան ի ծառայութիւն արքային Իսմայելի, եղին ուխտ ընդ մահու, և ընդ դժոխոց դաշինս կռեցին Թէոդորոս Ռշտունեաց տէր ամենայն իշխանաւքն Հայոց...»[6]։

Սեբեոսը որոշակի ասում է, թե արաբները բյուզանդական կայսրության դեմ հարձակման են անցնում Կոստանդնի թագավորության 12-րդ

---

[1] Օրմանյան, «Ազգապատում», Կ. Պոլիս, հատ. Ա, էջ 722։

[2] Տէս Պատմութիւն Ղեւոնդեայ Մեծի վարդապետի Հայոց, Պետերբուրգ, 1887 թ. հրատարակության առաջաբանը, էջ ԿԴ։

[3] Ակադ. Հ. Մանանդյան, «Ժողովրդական ապստամբությունները Հայաստանում արաբական տիրապետության դեմ», էջ 6։

[4] Զամչյան, «Պատմութիւն Հայոց», հատ. Բ, էջ 347։

[5] Ընդգծումը մերն է—Բ. Ա.։

[6] Սեբէոսի եպիսկոպոսի պատմութիւն, հրատ. Արմֆանի, 1939 թ., էջ 140։

տարում և նույն տարին էլ պայմանագիր է կնքվում Թեոդորոս Ռշտունու և Մուավիայի միջև։ Կոստանդին Բ գահ է բարձրացել 641 թվին։ Այս թիվը հաշվելով նրա գահակալության առաջին տարին՝ կտեսնենք, որ նրա թագավորության 12-րդ տարին ընկնում է 652 թվին։ Սխալ կլիներ 641 թվի վրա գումարել 12 տարի = 653 թ., քանի որ պատմիչը պարզ ասում է, թե պայմանագիրը կնքվել է Կոստանդնի թագավորության 12-րդ տարում և ոչ նրա գահակալությունից 12 տարի հետո։

Այս թվականն ավելի ճշգրտվում է ժամանակակից պատմական անցքերի կապակցության մեջ։ Սեբեոսի վկայության մեջ ասվում է, թե արաբների հարձակումը և պայմանագրի կնքումը տեղի են ունեցել պարսկական թագավորության վերացումից և 648 թվին խալիֆաթի ու բյուզանդական կայսրության միջև կնքված եռամյա զինադադարի ժամանակը լրանալուց հետո. այլ կերպ դժվար է հասկանալ Սեբեոսի խոսքերը. «արդ՝ իբրև ետես արքայն Իսմայելի զյաջողումն յաղթութեանն... իբրև լցան ամք Գ պայմանի խաղաղութեանն...»[1] և այլն։

Սեբեոսը պարսից թագավորության վերացումը դնում է Սասանյան Պարսկաստանի արևելյան գավառներն արաբների կողմից նվաճվելու և Հազկերտ Դ-ի մահվան տարին, իսկ այդ անցքերը տեղի են ունեցել 651 թվի ընթացքում։ Նույն թվին էլ լրացել է զինադադարի ժամանակը «Եւ եղև յամին մետասաներորդի Կոստանդի լուծումն լինի հաշտութեանն՝ որ ընդ Կոստանդին և ընդ Մաւիաս իշխանն Իսմայէլի»[2]։

Ուրեմն, Թեոդորոս Ռշտունու հետ պայմանագիրը կնքվել է 651 թվից հետո։

Պայմանագիրը 652 թվին կնքված լինելու երրորդ կարևոր ապացույցն այն է, որ այդ պայմանագիրն աւիթ ծառայեց, որպեսզի նրա կնքումից անմիջապես հետո բյուզանդական Կոստանդին Ի կայսրը, հարյուր հազարանոց բանակի գլուխն անցած, արշավի Հայաստան՝ երկիրը բյուզանդական կայսրությանը ենթարկելու համար. իսկ այդ արշավանքի ժամանակը չի վիճարկվում—այն տեղի է ունեցել 652 թվին։ Նույնիսկ կարելի է որոշել, թե տարվա որ ժամանակ է սկսել Կոստանդինն իր արշավանքը։ Բյուզանդական կայսրը հետևում էր հայերի վերաբերմունքին դեպի արաբները և, պայմանագրի մասին իմանալուն պես, փորձում է ոիրաշահել հայերին.

«...զի թէպէտ և բազում աղաչանս և պաղատանս գրեաց առ նոսա [հայերին] կայսրն և կոչեաց զնոսա առ ինքն, և ոչ կամեցան լսել նմա։ Ապա ասէ. «Ես գամ ի Կարնոյ քաղաք, և եկայք դուք առ իս»։ Եւ կամ՝ «Ես գամ առ ձեզ, և տամ ձեզ աւղնութիւն հոգի և խորհիմք ի միասին, եթէ զինչ արժան իցէ առնել». սակայն և այնպէս ոչ կամեցան լսել նմա»[3]։

Հայերի մերժողական պատասխանին հետևում է Կոստանդնի արշավանքը։

---

1 Սեբէոսի եպիսկոպոսի պատմութիւն, հրատ. Արմֆանի, 1939 թ., էջ 140։

2 Նույն տեղում, էջ 146—147։

3 Նույն տեղում, էջ 141։

«Յայնժամ արքայ Կոստանդին... առ զզաւրս իւր և գնաց ի Հայս Ճ հազարաւ... Եւ անտի գնացեալ եկն ի Կարնոյ քաղաք. յամի ԺԲ-երորդի թագաւորութեան իւրում, ի քսան ամի Իսմայելացւոց տէրութեանն»[1]։

Կոստանդնի թագավորության 12-րդ տարին 652 թվականն է, իսկ արարների տիրապետությունն ակնհայտորեն հաշվված է առաջին խալիֆի գահակալության տարուց՝ 632 թվից։

Սեբեոսը վկայում է, թե Կոստանդինը Կարինում երկար չմնաց. «Եւ նստաւ արքայ Կոստանդին ի Կարնոյ քաղաքի աւուրս ինչ»։ Ապա նա շարժվում է առաջ՝ զորքերի համար կողոպուտներ կատարելու, Հայաստանում ձմեռելու և «երկիրը մեջտեղից վերացնելու» մտադրությամբ։

«... կամեցաւ առնուլ աւար զզաւրացն բազմութեան, և երթալ ձմեռել ի Հայս, զի բարձցէ զերկիրն ի միջոյ»[2]։ Այնուհետև Սեբեոսը պատմում է, որ կայսրը քսան հազար զորքով ձմեռն անց է կացնում Հայաստանի այն ժամանակվա մայրաքաղաք Դվինում և Կ. Պոլիս է վերադառնում ձմեռն անցնելուց հետո, զատկի մոտերքը, այսինքն՝ 653 թվի գարնանը։

Այս ամենից հետևում է, որ Կոստանդին Ի իր արշավանքն սկսել էր 652 թ. աշնանը, ուստի Թեոդորոս Ռշտունու և Մուավիայի միջև ղայմանագրի կնքումը, որն և առիթ էր ծառայել Կոստանդինին, հայերին սիրաշահելու անհաջող փորձից հետո, սկսելու իր արշավանքը, կարող էր տեղի ունենալ միայն ամիսներ առաջ, այսինքն՝ 652 թ. ամառը։

Այս հաշվումները հաստատվում են նաև Անանիա Շիրակացու և Ղեվոնդի վկայություններով, որ հայերը, վրացիները և աղվաններն ապստամբել են արարների դեմ, ծառայելով նրանց երեսուն տարի։

«Դարձեալ ի հարկատուութենէ նոցա Հայք, Վիրք և Աղուանք ծառայեալ նոցա ամս Լ [30]»[3]։ Այնուհետև պատմում են, որ ապստամբության 4-րդ տարում Հայաստան են արշավել խազարները, որոնց դեմ պատերազմելիս սպանվում է Հայաստանի իշխան Գրիգոր Մամիկոնյանը։ Մեր մի հոդվածում[4] քննելով այս ապստամբության ժամանակի հարցը, ցույց ենք տվել, որ Գրիգոր Մամիկոնյանի սպանությունը խազարների դեմ մղած ճակատամարտում տեղի է ունեցել 685 թվի օգոստոսի 16-ին[5], իսկ դրանից երեք տարուց մի փոքր ավելի առաջ տեղի ունեցած ապստամբության ժամանակը որոշել ենք 682 թ. ամառը։ Հիրավի, Անանիա Շիրակացին, որ ժամանակակից էր այդ անցքերին, իսկ Ղեոնդը, որը լավ ծանոթ է Սեբեոսին և շարունակում է նրան, իր պատմությունն սկսելով այնտեղից, որտեղ թողել է Սեբեոսը, հայերի ծառայելը (այսինքն արարների տիրապետությունն

---

1 Նույն տեղում։

2 Նույն տեղում, էջ 142։

3 Պատմութիւն Ղեոնդեայ Մեծի վարդապետի հայոց, Պետերբուրգ, 1887, էջ 15, նաև Անանուն ժամանակագրութիւն, Վենետիկ, 1904, էջ 79։

4 Տես «Գիտական ժողովածու», նվիրված Հայաստանում Սովետական իշխանության հաստատման 20-ամյակին. էջ 65։

5 Դեպքերին ժամանակակից Անանիա Շիրակացին վկայում է, որ Գրիգոր Մամիկոնյանի սպանությունը տեղի է ունեցել հայոց ՃԼԴ թվականի սահմի ամսի 10-ին։ Տես Անանուն ժամանակագրութիւն, Վենետիկ, 1904, էջ 80։

ընդունելը) հաշվում են Թեոդորոս Ռշաունու՝ պայմանագրի կնքումից սկսած։ Եվ իրոք, 652 թվի ամռանից մինչև 682 թ. ամառը լրիվ 30 տարի է անում։

Այսպիսով կարելի է որոշել Թեոդորոս Ռշաունու և Մուավիայի միջև կնքված պայմանագրի ոչ միայն ստույգ թիվը, այլև տարվա ժամանակը։ Երբ կնքվել է այդ պայմանագիրը, այն է՝ 652 թվի ամառը։

2. ԱՆԱՍՏԱՍ ԱԿՈՌԵՑԻ, ԻՍՐԱՅԵԼ ՕՂՄՍԵՑԻ ԵՎ ՍԱՀԱԿ ՁՈՐՈՓՈՐԵՑԻ ԿԱԹՈՂԻԿՈՍՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԸ

Հայոց կաթողիկոսների ժամանակի ճշդրտումն անհրաժեշտ և կարևոր է, քանի որ մեր պատմիչները բազմաթիվ պատմական անցքեր կապում են նրանց ժամանակի, այլև աթոռակալության այսինչ կամ այնինչերորդ տարվա հետ։

Օրմանյանը՝ Անաստաս Ակոռեցու կաթողիկոսության տարիները դնում է 661—667 թ. թ., Իսրայել Օղմսեցունը՝ 667—677 թ. թ., իսկ Սահակ Ձորոփորեցու աթոռակալությունը՝ 677—703 թ. թ.։ Համապատասխան թվերը նույնն են Զամչյանի մոտ, Ալիշանը Անաստաս Ակոռեցու աթոռակալությունը դնում է 660—667 թ. թ.։ Կաթողիկոսների ժամանակը ճշգրտելու գործում մեզ համար ելակետ է ծառայելու մի ամենաստույգ և անվիճելի թվական, այն է՝ խազարների արշավանքը և Գրիգոր Մամիկոնյանի սպանվելը հայոց ՃԼԴ թվականի սահմի ամսին, որը համապատասխանում է մեր թվականության 685 թ. օգոստոս ամսին։ Այնուհետև Հովհաննես Դրասխանակերտցին և Վարդան Բարձրաբերդցին վկայում են, որ այդ արշավանքը տեղի է ունեցել Սահակ Ձորոփորեցու աթոռակալության 7-րդ տարում։ Դրասխանակերտցին գրում է.

«Իսկ ապա եօթերորդում ամի աթոռակալութեան սորա [Սահակ Ձորոփորեցու] պատերազմ սաստիկ յայնմ մարզէ Խազրաց՝ ի վերայ սաստկացեալ լինէր մեծ իշխանին Գրիգորի ...»[1] և այլն։

Վարդան Բարձրաբերդցին վկայում է. «Ի յեօթն[2] յամիս սորա՝ արշաւեցին Խազիրք ի Հայս...»[3] և այլն։

---

[1] Յովհաննու կաթողիկոսի Դրասխանակերացւոյ Պատմութիւն Հայոց, Թիֆլիս, 1912 թ., էջ 93։

[2] Ասողիկը վկայում է, թե խազարներն արշավել են Հայաստան Սահակ Ձորոփորեցու աթոռակալության 5-րդ տարում կամ ՃԼ թվին (681)։ Նկատենք, որ նախ՝ ինչպես էլ հաշվելու լինենք, ՃԼ թիվը Սահակի կաթողիկոսության հինգերորդ տարին ընկնել չի կարող և երկրորդ՝ ժամանակակից և ժամանակով մոտիկ պատմիչները 681 թվին ոչ մի խազարական արշավանք չեն հիշատակում։ Մեզ թվում է, թե Ստեփանոս Տարոնացու (Ասողիկի) մեզ հասած ձեռագրերում տվյալ հատվածն աղավաղված է. խազարական արշավանքը տեղի է ունեցել ոչ թե Սահակ Ձորոփորեցու ե ամին կամ ՃԼ թվականին, այլ նրա աթոռակալության է ամին կամ ՃԼԴ թվականին։ Ի դեպ՝ այս ՃԼԴ թվականը խազարական արշավանքի համար կա նաև հենց իրեն՝ Ասողիկի մոտ, աղավաղված հատվածից երեք տող ներքև։ Իսկ Անանիա Շիրակացին հիշատակում է նույնիսկ Գրիգոր Մամիկոնյանի սպանության օրը խազարական արշավանքի ժամանակ, այն է ՃԼԴ [685] թ. սահմի ամսի 10-ին։

[3] Հաւաքումն պատմութեան Վարդանայ վարդապետի լուսաբանեալ, Վենետիկ, 1862, էջ 70։

Հետևաբար, Սահակ Զորոփորեցու աթոռակալության ժամանակը կընկնի 678 թվին, այն էլ այդ տարվա երկրորդ կեսին։ Իսկ նրա մահվան տարին Օրմանյանը ճիշտ է որոշել՝ 703 թվին հայերի՝ արարների դեմ ունեցած Վարդանակերտի նշանավոր ճակատամարտից հետո։

Սահակ Զորոփորեցու աթոռակալության տարվան համապատասխան՝ մեկ տարով առաջ է դալիս Իսրայելի աթոռակալության տարին. ուրեմն, նա կաթողիկոս է եղել 668—678 թ. թ., քանի որ պատմիչների բոլոր վկայությունների համաձայն՝ նրա կաթողիկոսությունը տևել է տասը տարի, հետևաբար և Անաստասի աթոռակալության վեց տարիները կընկնեն 632—668 թ. թ.։ Դրան համապատասխան՝ Ներսես Տայեցու [Շինող] մահվան տարին կլինի 662 թվականը։ Իսկապես, եթե գումարենք Անաստասի աթոռակալության 6 տարին, Իսրայելի 10 տարին և Սահակ Զորոփորեցու՝ մինչև խաղարական արշավանքն ընկնող 7 տարին, կստանանք 23 տարի և եթե 685 թվականից 23 տարի հետ գնանք, կստանանք 662 թվականը՝ Անաստասի աթոռակալության համար և ոչ 661 թ., մանավանդ որ Անաստասի 6, Իսրայելի 10 և Զորոփորեցու 7 տարիները կարող են լրիվ չլինել, հետևապես դումարը 23-ից նույնիսկ պակաս կարող է լինել, դրանով իսկ 661 թվականը չի կարող Անաստասի աթոռակալության տարին լինել։

Մեր ենթադրությունները հաստատվում են մի քանի պատմական անցքերով։ Այսպես օրինակ՝ Սեբեոսը հիշատակում է Մուավիայի խալիֆ դառնալը և երկրի խաղաղվելը 661 թվականին, բայց Ներսեսի մահվան մասին չի հիշատակում[1]։ Ղևոնդը[2], Դրասխանակերտցին[3] և Ստեփանոս Տարոնացին[4] վկայում են, թե հայերը Ներսեսի գլխավորությամբ խնդրում են Մուավիա խալիֆին, ըստ երևույթին այն բանի համար, որպեսզի նա վերականգնի Թեոդորոս Ռշտունու հետ կնքած պայմանագիրը, խոստանալով վճարել տարեկան 500 դահեկան հարկ։ Այս դեպքերը տեղի են ունեցել 661 թվականին՝ Մուավիայի խալիֆ դառնալուց և երկրում խաղաղություն հաստատվելուց հետո, այսինքն այդ տարվա երկրորդ կեսին։ Ավելին. Դրասխանակերտցին և Ստեփանոս Տարոնացին գրում են, թե Մուավիայի խալիֆության երկրորդ տարում (662 թ.) Գրիգոր Մամիկոնյանն իշխան է կարգվում նախարարների և Ներսեսի խնդրանքով։ Ուրեմն, Ներսեսը կարող էր մեռած լինել ամենաշուտ 662 թվականի սկզբներին և այդ ժամանակ միայն Անաստասը կարող էր կաթողիկոս դառնալ։ Այնուհետև հիշատակություն կա, որ Ներսեսը կաթողիկոս է եղել քսան տարի և ինն ամիս[5]։ Այս դեպքում էլ նրա մահը դարձյալ կընկներ 662 թվականին։

Պատմիչները վկայում են, որ Արուճի (Թալիշ) կաթուղիկեի կառուցումը տեղի է ունեցել Անաստասի օրոք, իսկ Արուճի շինարարական արշ-

---

1 Սեբեոսի եպիսկոպոսի պատմութիւն, հրատ. Արմֆանի, 1939 թ., էջ 156։

2 Ղևոնդեայ Մեծի վարդապետի պատմութիւն, Պետերբուրգ, 1887, էջ 14։

3 Յովհաննու կաթողիկոսի Դրասխանակերտցւոյ Պատմութիւն Հայոց, Թիֆլիս, 1912 էջ 89։

4 Ստեփանոսի Տարօնացւոյ Ասողկան Պատմութիւն տիեզերական, Պետերբուրգ՝ 1885, էջ 122։

5 Զամչյան, «Պատմութ. Հայոց», հատ. Բ, էջ 360։

ձանագրությունը վերագրվում է 668 թվականին։ Այս էլ կարող է ապացույց լինել, որ Անաստասը մեռել է 668 թվականին և ոչ 667-ին։ Նկատի ունենալով, որ նա կաթողիկոս է եղել վեց տարի, ապա նրա աթոռակալության տարին կլինի 662 թվականը։

Մեր հաշվումների ճշտության համար մի այլ ապացույց էլ կարող է ծառայել այն, որ արաբ զորավար Բառարան ասպատակություններ է կատարել Հայաստանում և դուրս է վտարվել Հայաստանից 678 թ.[1]։ Բառարային հիշող պատմիչները՝ Դրասխանակերտցին[2] ու Վարդանը[3] նրա ասպատակությունը դնում են Իսրայելի ժամանակ[4]։ Ուրեմն Իսրայելը կարող էր մեռած լինել ամենաուշը 678 թվին և չի կարելի նրա աթոռակալությունը մինչև 677 թ. հասցնել։

3. ԱՇՈՏ ԲԱԳՐԱՏՈՒՆԻ, ՆԵՐՍԵՀ ԿԱՄՍԱՐԱԿԱՆ, ՍՄԲԱՏ ԲԱԳՐԱՏՈՒՆԻ

Այս երեք իշխանների ժամանակը պատմագիտության մեջ, մասամբ և մատենագիրների մոտ, շփոթված և խառնված է։ Զամչյանն Աշոտի իշխան դառնալը դնում է 685 թվականին և տևողությունը համարում է չորս տարուց փոքր ինչ ավելի[5]։ Ներսեհ Կամսարականի իշխանության սկիզբը դնում է 690 թվականին[6], իսկ Սմբատին որպես իշխան չի իմանում, նրան համարում է զորավար՝ թե Աշոտի և թե Ներսեհի ժամանակ։ Նա ընդհանրապես 690—700 թվականների անցքերը շփոթում է միմյանց հետ։

Օրմանյանը փորձում է վերացնել այդ շփոթը, սակայն ավելի քան խճճում է պատմական անցքերը։ Նա խազարների արշավանքը և Գրիգոր Մամիկոնյանի սպանությունը դնում է 682 թվականին և մինչև 688 թվականն ընկնող վեց տարին հավասար բաժանում է Աշոտի ու Ներսեհի միջև, այլև ենթադրում է, թե այդ ժամանակ «թերևս եռամյա պայմանաժամով իշխանապետ փոփոխելու սովորություն մը կար»,—մի բան, որ բոլորովին անհիմն է։ Այնուհետև Հուստինիանոս կայսեր գողմից դուրս նշանակված մի երկրորդ Ներսեհ Կամսարական իշխանի համար էլ իշխանության տարիներ է տալիս 692—695 թ. թ., իսկ Սմբատ Բագրատունու իշխանության սկիզբը դնում է 695 թվականին[8]։ Օրմանյանի՝ երկրորդ Ներսեհ Կամսարականին վերաբերող սխալը հետևանք է այն բանի, որ Սամվել Անեցու[9]

---

1 Օրմանյանը, առանց հիմք ունենալու, այդ արշավանքը դնում է Սահակ Զորոփորեցու ժամանակ՝ 679 թ։ Տես Օրմանյան — Ազգապատում, հատ. Ա, էջ 755—756։

2 Յովհաննու կաթողիկոսի Դրասխանակերտցւոյ Պատմութիւն Հայոց, Թիֆլիս, 1912, էջ 93։

3 Հաւաքումն պատմութեան Վարդանայ վարդապետի լուսարանեալ, Վենետիկ, 1862, էջ 70։

4 Զամչյան, Պատմութիւն Հայոց, հատոր Բ, էջ 371—372։

5 Նույն տեղում, էջ 373։

6 Օրմանյան—Ազգապատում, Կ. Պոլիս, 1912 թ., էջ 758—759։

7 Նույն տեղում, էջ 759։

8 Նույն տեղում, էջ 771։

9 Սամուէլի քահանայի Անեցւոյ Հաւաքմունք ի դրոց պատմագրաց, Էջմիածին, 1893, էջ 84։

և Կիրակոս Գանձակեցու[1] տեղեկությունների համաձայն՝ Գրիգոր Մամիկոնյանից հետո Ներսեհ Կամսարականն է իշխել, ապա՝ Աշոտ Բագրատունին, իսկ մյուս պատմիչների մոտ Աշոտից հետո հիշատակվում է Ներսեհ Կամսարականը։ Օրմանյանը, շփոթը վերացնելու համար, ստեղծել է երկրորդ Ներսեհ Կամսարականին։

Ահա այս ամենը, ինչ հայտնի է պատմագիտությանն այս երեք իշխանների և նրանց ժամանակի վերաբերյալ, ըստ որում շփոթված է ոչ միայն նրանց ժամանակը, այլև անձերը։

Սակայն մատենագրական վկայությունների ուշադիր զննումը մեզ որոշ եզրակացությունների է բերում։

Քննենք այդ վկայությունները։

Ա. Աշոտ Բյուրատյան Բագրատունի

7-րդ դարի՝ մեզ հետաքրքրող անցքերին ժամանակով ամենամոտը 8-րդ դարի պատմիչ Ղևոնդն է, որն իր դրքի Ե գլուխը նվիրել է Աշոտին. այնտեղ նա վկայում է.

«Իսկ ապա յետ մահուանն Գրիգորի յաջորդէ զիշխանութիւնն Աշոտ Պատրիկ այր երևելի և նախամեծար ի մէջ նախարարացն Հայոց, ի տոհմէ Բագրատունեաց»[2]։

Երկրորդ՝ ժամանակով մոտ՝ պատմիչը Հովհաննես Դրասխանակերտցին է, որն Աշոտի և Ներսեհի վերաբերյալ ոչինչ չգիտե և Գրիգոր Մամիկոնյանի մասին խոսելուց հետո սկսում է խոսել Սմբատ Բագրատունու մասին[3]։

Ստեփանոս Տարոնացին (Ասողիկ) ուղղակի հիշատակում է Աշոտ Բագրատունու իշխան դառնալու տարին։

«Ի սորա [Սահակ Զորոփորեցու] Ե [պետք է լինի Է][4] ամին իշխան Գրիգոր պատերազմեալ ընդ խազրաց՝ մեռանի ի ՃԼ [պետք է լինի ՃԼԴ][5] թուականին։ Եւ ի ՃԼԵ թուականին Աշոտ Բագրատունի Հայոց իշխան եղև ամս Գ»[6]։

Սամվել Անեցին թեև Աշոտից առաջ սխալ կերպով հիշատակում է Ներսեհ Կամսարականին, բայց և այնպես Աշոտի իշխան դառնալը դնում է ՈՁՁ (686) թվականին.

«ՈՁՁ։ Հայոց՝ Աշոտ՝ ամս Գ»[7]։

---

[1] Կ. Գանձակեցի, Պատմութ. Հայոց, Թիֆլիս՝ 1909, էջ 60։

[2] Պատմութիւն Ղեւոնդեայ Մեծի վարդապետի հայոց, Պետերբուրգ, 1887, էջ 16։

[3] Թերևս Դրասխանակերտցու Պատմության համապատասխան հատվածը մեզ չի հասել։

[4] Տես վերևում, էջ 64։

[5] Նույնը։

[6] Ստեփանոսի Տարօնացւոյ Ասողկան Պատմութիւն տիեզերական, Պետերբուրգ, 1885, էջ 100։

[7] Սամուէլի քահանայի Անեցւոյ Հավաքմունք ի գրոց պատմագրաց, Էջմիածին, 1893, էջ 84։

Վարդան Բարձրաբերդցին վկայում է.

«Ի յեօթն ամին սոցա [Սահակ Զորոփորեցու]՝ արշաւեցին Խազիրք ի Հայս և սպանին զԴրիգոր իշխանն և գերեցին զհնարաւորն իւրեանց։ Եւ առնու զիշխանութիւնն Աշոտ Բագրատունի՝ որդի Սմբատայ»[1]։

Բնորոշ է, որ ժամանակով մոտ պատմիչները բոլորն էլ Աշոտի իշխանությունը գնում են Դրիգոր Մամիկոնյանից հետո։ Ստեփանոս Տարոնացին և Սամվել Անեցին Աշոտ Բագրատունու իշխան դառնալու տարին նույնիսկ որոշակի համարում են 686 թվականը, իսկ Ղևոնդի ու Վարդանի վկայությունների մեջ թեև թվականը չի բերված, սակայն դրանք չեն հակասում Սեփանոս Տարոնացու և Սամվել Անեցու վկայություններին։

Օրմանյանը Դրիգորի մահը դնելով 682 թվականին, ընկնում է հակասությունների մեջ։ Մինչդեռ, ինչպես ցույց ենք ավել, Դրիգոր Մամիկոնյանն ոպանվել է 665 թ. օգոստոսին։ Նրան սպանող խազարները, ինչպես վկայում է Ասողիկը, 665 թ. տիրեցին Հայաստանին, Վրաստանին և Աղվանից աշխարհին, ըստ երևույթին նրանց վտարումից հետո միայն, 686 թվականին է, որ Աշոտն իշխան է դառնում։

Սեփանոս Տարոնացին և Սամվել Անեցին Աշոտի իշխանության տևողությունը ցույց են տալիս երեք տարի, սակայն ավելի ճիշտ է ժամանակով ամենամոտիկ պատմիչը՝ Ղևոնդը, որը վկայում է.

«Իսկ Աշոտոյ կալեալ զիշխանութիւնն ամս Դ. և ի չորրորդ ամի իշխանութեան նորա գունդ մի ասպատակութեամբ յորդւոցն Իսմայելի հարձակեալ ի վերայ աշխարհիս Հայոց...»[2] և այլն։

Ուրեմն Աշոտն իշխան է եղել երեք լրիվ տարի և նրա իշխանության չորրորդ տարում Ատրպատականի կողմից ասպատակած արաբական մի ջոկատի դեմ տեղի ունեցած ճակատամարտում Աշոտը, մահացու վերք ստանալով, մահացել է։

Ուրեմն Բյուրատյան Աշոտ Բագրատունու իշխանության ժամանակամիջոցը կլինի 686—689 թ. թ., ըստ որում 689 թվականը՝ ոչ լրիվ։ Աշոտ Բագրատունու իշխանության ժամանակ նրա եղբայր Սմբատը վարում էր Հայաստանի զորավարի պաշտոնը։

Բ. Ներսեհ Կամսարական

Բյուրատյան Աշոտի մահվան տարում (689) բյուզանդական կայսրությունը գրավելով Հայաստանը, այնտեղ կյուրոպաղատ է նշանակում ծերունի Վահան Կամսարականի որդուն՝ Շիրակի և Արշարունիքի տեր Ներսեհ Կամսարականին։ Ներսեհ Կամսարականի իշխանության տևողությունն Ստեփանոս Տարոնացին ցույց է տալիս չորս տարի. Հուսաինիանոս Երկրորդը «Կացոյց իշխանս աշխարհացն, զՆերսեհ Շիրակայ տէր...և Ներսեհ Կամսարական եկաց իշխան Հայոց ամս Դ»[3]։

---

[1] Հաւաքումն պատմութեան Վարդանայ վարդապետի լուսաբանեալ, Վենետիկ, 1862, էջ 70։

[2] Պատմութ. Ղեւոնդեայ Մեծի վարդապետի Հայոց, Պետերբուրգ, 1887, էջ 17—18։

[3] Ստեփանոսի Տարօնեցւոյ Ասողկան Պատմութիւն տիեզերական, Պետերբուրգ, 1885, էջ 101։

Իսկ Սամվել Անեցին[1] և Կիրակոս Գանձակեցին[2] նրան տալիս են երեք տարի։ Համենայն դեպս Աշոտ Բագրատունին և Ներսեհ Կամսարականը երկուսը միասին իշխել են վեց տարի՝ 686—691 թ. թ. և ավելի հավանական կլիներ Ներսեհի իշխանության ժամանակամիջոցը գնել 689 թ. սկզբներից մինչև 691 թ. վերջերը։ Սրան կհակասեր միայն Ասողիկի վկայությունը, որ Ներսեհ Կամսարականն իշխան է եղել չորս տարի, սակայն ինքը՝ Ասողիկը Աշոտի իշխանության սկիզբը գնում է 686 թվականին, իսկ Ներսեհ Կամսարականի իշխանության վերջը գնում է 691 թվականին, այսինքն երկուսին միասին՝ վեց տարի։ Սեր այս հաշվումներին հակասող ուրիշ ոչինչ մեզ հայտնի չէ և այլ տեղեկություններ էլ չկան, մնում է ընդունել, որ Ներսեհ Կամսարականն իշխել է 689—691 թ. թ.։ Սրա իշխանության ժամանակ էլ Հայաստանի զորավարի պաշտոնում մնում էր Սմբատ Բագրատունին։

Ներսեհ Կամսարականին հիշում է նաև Սոկրատ Սքոլաստիկոսի «Եկեղեցական պատմության» հայ թարգմանիչը՝ Փիլոն Թիրակացին, որն այդ համառոտ թարգմանությունը կատարել է Ներսեհի հանձարարությամբ[3]։ «Սեղբեսարոսի վարքը» Գրիգոր Զորոփորեցին թարգմանել է նույն Ներսեհ Կամսարականի հանձնարարությամբ, ըստ երևույթին 696 թվականին։

Անանիա Շիրակացին Ներսեհ Կամսարականին հիշատակում է իր թվաբանության խնդրագրքում (հարց Ի), նկարագրելով նրա որսն Արտին լեռան վրա՝ Թալինի մոտ[4]։

Սոկրատ Սքոլաստիկոսի «Եկեղեցական պատմության» հրատարակիչ Մեսրոպ Տեր-Մովսիսյանը[5], հետևելով Ալիշանին[6] Ներսեհի իշխանության տարիները համարում է 688—691 թ. թ.։

Թերևս նույն Ներսեհին է վերաբերում խոսքը Մովսես Խորենացուն կամ Անանիա Շիրակացուն վերագրվող «Աշխարհացույցի» այն հատվածում, որտեղ թվարկվում են Աֆրիկայի գավառները, այդ թվում և Պոնտիկան՝ «որոյ իշխեցու իմաստունն Ներսեհ Կամսարական պատրիկն Շիրակայ և Արշարունեաց տէրն»[7]։ Այս դեպքում կարելի է ենթադրել, որ Ներսեհ Կամսարականը 691 թվականից հետո բյուզանդական կայսեր կարգադրությամբ թողնում է Հայաստանը և իշխան է կարգվում Պոնտիկայում։

---

[1] Սամուէլի քահանայի Անեցւոյ Հաւաքմունք ի գրոց պատմագրաց, Էջմիածին, 1893, էջ 84։

[2] Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն Հայոց, Թիֆլիս, 1909, էջ 60։

[3] Տեսս Սոկրատայ Սքոլաստիկոսի Եկեղեցական պատմութիւն և պատմութիւն վարուց սրբոյն Սեղբեստրոսի եպիսկոպոսին. աշխատասիրութեամբ Մեսրոպ վ. Տէր-Մովսիսեան, Վաղարշապատ, 1896 թ., էջ 689։

[4] Գալուստ Տեր-Մկրտչյան, Անանիա Շիրակացի, Վաղարշապատ, 1896 թ., էջ 25, հարց Ի։

[5] Նույն տեղում, առաջաբան, էջ ՁԹ։

[6] Ալիշան, Շիրակ, էջ 4։

[7] Աշխարհացոյց Մովսիսի Խորենացւոյ, յաւելուածովք նախնեաց, Վենետիկ, 1881 էջ 18։

Գ. Սմբատ Բյուրատյան Բագրատունի

Հայաստանի իշխանի պաշտոնում Ներսեհ Կամսարականին հաջորդում է Սմբատ Բագրատունին։ Ժամանակով մոտ պատմիչ Ղևոնդը Սմբատ Բագրատունի իշխանին հիշատակում է 698 թ. անցքերի կապակցությամբ, առանց ցույց տալու նրա իշխանության սկիզբը[1]։

Դրասխանակերացին Սմբատի իշխան դառնալը հիշատակում է թերևս պակասավոր մի հատվածում և նրան դնում է Գրիգոր Մամիկոնյանից անմիջապես հետո[2]։

Սմբատ Բագրատունու իշխան դառնալու տարեթիվը բերում են Սեփանոս Տարոնացին և Սամվել Անեցին։ Առաջինը վկայում է.

«Եւ զկնի նորա [Ներսեհ Կամսարականին] ի ՃԽ [691] թուականին Սմբատ Բագրատունի Բիւրատեան Հայոց իշխան եղև ամս Ի»[3]։

Սամվել Անեցին իր ժամանակագրության մեջ նույնպես 691 թ. տակ է հիշատակում Սմբատ Բագրատունու իշխան դառնալը.

«ՈՂԱ... [691] Հայոց՝ Սմբատ Բագրատունի Բիւրատեան՝ ամս Ի»[4]։

Ինչպես տեսնում ենք, երկու պատմիչներն էլ համերաշխ են Սմբատ Բագրատունու իշխան դառնալու տարեթվի հարցում և մենք այդ թիվը ստույգ չհամարելու ոչ մի հիմք չունենք։ Սակայն չի կարելի համաձայնել պատմիչների հետ, թե նրա իշխանությունը տևել է 20 տարի։ Այդ նշանավոր մարդու կյանքը մեզ որոշ չափով հայտնի է. 686—691 թ. թ. Սմբատ Բագրատունին վարում էր Հայաստանի զորավարի պաշտոնը, 691 թ. նա իշխան է դառնում, երբ Հայաստանը գտնվում էր բյուզանդական տիրապետության ներքո։ 698 թ. մենք նրան տեսնում ենք այդ տիրապետության դեմ ըմբոստացած և նրա ընդվզումը ճնշելու համար մեծ զորքով Հայաստան է գալիս ինքը՝ Աբսիմար կայսրը։ 698—700 թ. թ. նա կենաց և մահու կռիվ է մղում արաբական նոր արշավանքների դեմ, որոնցով Հայաստանը վերջնականապես ենթարկվեց արաբական խալիֆաթին։ Սմբատը շղթայակապ Ասորիք է գերեվարվում (700 թ.)։ 703 թ. մենք Սմբատին գտնում ենք դարձյալ Հայաստանում և նա այս անդամ գլխավորում էր հայերի ապստամբությունն արաբների դեմ և Վարդանակերտի հռչակավոր ճակատամարտում գլխովին ջարդում է արաբներին։ Վերջապես 705 թ., երբ հայերից շատերին արաբները նենգաբար հրկիզեցին Նախճավանի և Խրամի տաճարներում, Սմբատն էլ այլ նախարարների հետ շղթայակապ արվեց և իր ամբողջ հարստությունը, որպես փրկավճար, արաբներին հանձնելուց հետո խաչ բարձրացվեց ու մեռավ։

---

1 Պատմութիւն Ղևոնդեայ մեծի վարդապետի Հայոց, Պետերբուրգ, 1887, էջ 19։

2 Յովհաննու կաթողիկոսի Դրասխանակերտցւոյ Պատմութիւն Հայոց, Թիֆլիս, 1912, էջ 93։

3 Ստեփանոսի Տարօնեցւոյ Ասողկան Պատմութիւն տիեզերական, Պետերբուրգ, 1885, էջ 101։

4 Սամուէլի քահանայի Անեցւոյ Հաւաքմունք ի գրոց պատմագրաց, Էջմիածին, 1893, էջ 84։

Սմբատ Բագրատունին պատմագիրների մոտ հանդիպում է Սմբատ Բյուրատյան, Սմբատ որդի Սմբատ Վարաղտիրոցի և Սմբատ որդի Աշոտի անուններով։ Սմբատ և Աշոտ անունները Բագրատունյան տոհմի համար այնքան սովորական են եղել, որ նրանց շփոթելը միանգամայն հնարավոր է և իրավացի է Օրմանյանը, երբ միևնույն անձն է համարում տարբեր անուններով հանդիպող Սմբատ Բագրատունուն։ Իսկ այն հանդամանքը, որ պատմիչները նրա իշխանության տևողությունը համարում են քսան տարի, մեր կարծիքով՝ կարելի է բացատրել նրանով, որ Սմբատը 686—691 թ. թ. եղել է զորավար, իսկ 691—705 թ. թ. (թեև ընդմիջումով) վարել է իշխանի պաշտոնը, այդպիսով նա պատմական նշանավոր դեր է խաղացել ուղիղ քսան տարի։

Այսպիսով՝ այն եզրակացությունները, որոնց մենք հանգեցինք այս հոդվածում, հետևյալներն են.

1. Թեոդորոս Ռշտունու և Մուավիայի միջև պայմանագրի կնքումը տեղի է ունեցել 652 թ. ամառը։

2. Ներսես Տայեցի (Շինող) կաթողիկոսը մեռել է ոչ թե 661 թ., այլ 662 թվականին։

3. Անաստաս Ակոռեցի կաթողիկոսի աթոռակալության տարիներն են ոչ թե 661—667 թ. թ., այլ 662—668 թ. թ.։

4. Իսրայել Օդմսեցի կաթողիկոսի աթոռակալության ժամանակն էլ մի տարով առաջ է գալիս և ընկնում է 668—678 թ. թ.։

5. Ստեփանոս Զորոփորեցի կաթողիկոսի աթոռակալությունը տևել է 25 տարի և ընկնում է 678—703 թ. թ.։

6. Գրիգոր Մամիկոնյանին հաջորդել է ոչ թե Ներսեհ Կամսարականը, այլ Աշոտ Բյուրատյան Բագրատունին, որը Հայաստանի իշխան է եղել 686—689 թ. թ.։

7. VII դարի վերջերին երկու Ներսեհ Կամսարական իշխաններ չեն եղել. Ներսեհ Կամսարականը ծերունի Վահան Կամսարականի որդին է, Հայաստանի կյուրոպաղատության պաշտոնն ստացել է բյուզանդական Հուստինիանոս երկրորդ կայսրից և ունեցել է ապուհյուպատ, պատրիկ, դուքս տիտղոսները։ Նրա իշխանության տարիներն են 689—691 թ. թ.։

8. Սմբատ Բյուրատյան Բագրատունին Աշոտ Բյուրատյանի եղբայրն է, 686—691 թ. թ. եղել է Հայաստանի զորավարը, իսկ 691 թ. հետո՝ Հայաստանի իշխանը։ Արաբների կողմից նա մահապատժի է ենթարկվել 705 թվականին։

ХРОНОЛОГИЧЕСКИЕ ЗАМЕЧАНИЯ

(РЕЗЮМЕ)

В настоящей статье—„Хронологические замечания"—затрагиваются некоторые неуточненные или спорные хронологические даты истории армянского народа VII века.

1. В 50-х годах VII в. между правителем Армении Теодоросом Рштуни и арабским военачальником (в 661 году ставшим халифом) Муавией был заключен договор, на основании которого Армения стала подвластной арабскому халифату. Этот важнейший в истории армянского народа акт, как свидетельствует современник его—историк Себеос, имел место *в двенадцатом году* правления византийского императора Константина III. Этот договор послужил поводом к тому, что Константин III начал поход на Армению осенью 652 года, непосредственно после заключения этого договора; следовательно, договор был заключен летом 652 года. Это подтверждается и сведениями историка VIII века Леонтия, который сообщает, что Армения отпала от арабского халифата „прослужив арабам 30 лет". А это первое отпадение Армении от арабского халифата совершилось летом 682 года, т. е. спустя ровно 30 лет со времени заключения договора 652 года.

2. Уточнение времени пребывания на престоле армянских католикосов дает возможность установить некоторые исторические даты, так как армянские историки зачастую исчисляют даты тех или других исторических событий в связи с датой вступления современного им католикоса на престол. По некоторым датам, относящимся ко второй половине VII века, нам удалось установить следующее:

а) Католикос Нерсес III (строитель известного храма „Звартноц") скончался не в 661, а в 662 году.

б) Анастасий из Акоры занимал престол католикоса не в 661—667, а в 662—668 гг.

в) Время пребывания на престоле католикоса Исраила из Одмсу приближается к нам на один год и занимает промежуток времени между 668—678 гг.

г) Саак из Дзоропора католикосом был 25 лет, с 678 по 703 г.

3. В последней четверти VII века правителями Армении были Ашот Багратуни, Нерсеh Камсаракан и Смбат Багратуни. Однако, не только время их правления, но и их личности спутаны. На основании исследования исторических событий мы полагаем следующее:

а) Григория Мамиконяна (662—685) на посту правителя Армении заменил не Нерсеh Камсаракан, а Ашот Бюратян Багратуни, который правил Арменией 686—689 гг.

б) Правителем Армении в конце VII века был один Нерсеh Камсаракан, а не два Нерсеh'а Камсараканов. Сын престарелого Ваhана Камсаракана—Нерсеh Камсаракан назначен был куропалатом (правителем) Армении византийским императором Юстинианом II и правил в 689—691 гг.

в) Смбат Бюратян Багратуни, брат Ашота Бюратяна Багратуни, при правлении брата (686—689) и Нерсеh'а Камсаракана (689—691) был спарапетом (главнокомандующим) Армении, а с 691 г. он стал правителем Армении. В 703 году он возглавлял восстание армян против арабского владычества, а в 705 г. пал жертвой коварства арабского наместника в Армении и был казнен.

Бабкен Аракелян